Արձանագրություն N 2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ-25/1 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

26 մարտի 2025թ.
ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝	Գ. Սեփոյան, Ա. Թումանյան, Ս.Գարանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Կիրակոսյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	օդորակիչ	3 400 000
2	օդորակիչ	680 000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 24.03.2025թ.-ին ժամը 11:30-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 25.03.2025թ.-ին ժամը 11:30-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Հասցեներ
1	«ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ » ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 08432296, ՀՀ Գեղարքունիք մարզ, Գավառ, Բոշնաղյան փ. 11/2 1201 sash.dvoyan01@gmail.com, հեռ. 095255855
2	«ՄԻՆՈՆ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 08273825 , ք.Երևան Կիևյան Փ./ Շ 16/ 8 / 814, minon_simonyan@mail.ru, հեռ. 098570007
3	«ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00474273, ք.Երևան, Խորենացու 72-12, h_davo@mail.ru, հեռ. 077474006
4	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 02235463, ք.Երևան, Գ. Նժդեհի21, vlvtender@gmail.com, հեռ. 010449968
5	«ԱՔՍԵԼ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 02918838, ք.Երևան, Թումանյան 8, am.llc24@mail.ru, հեռ. 096701106
6	«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 08287363, ք.Երևան, Կիևյան փ. / Շ / 8 / 62 բն. sopranoarm@gmail.com, հեռ. 091575572

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ-25/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

eauction.armeps.am համակարգի միջոցով հրավերով նախատեսված հարցումներ չեն եղել:

6. Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Չ/հ	Չափաբաժնի անվանումը	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	օդորակիչ	1.ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆ ԻԿՍ ՍՊԸ	3 400 000	3400000	20 %	4080000	2300000	20 %	2 760 000	
		2.ՄԻՆՈՆ ՍՊԸ		2833000	20 %	3399600	2333300	20 %	2 799 960	
		3.ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ		2833330	20 %	3399996	2520000	20 %	3 024 000	

Չ/հ	Չափաբաժնի անվանումը	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
		4.ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ		2833330	20 %	3399996	2580000	20 %	3 096 000	
		5.Աքսել ՍՊԸ		500000000	20 %	600000000	500000000	20 %	600000000	Մերժված
		6.ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ		550000000	20 %	660000000	550000000	20 %	660000000	Մերժված
2	**օդորակիչ**	1.ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ	**680 000**	566660	20 %	679992	420000	20 %	**504 000**	
		2.ՄԻՆՈՆ ՍՊԸ		566500	20 %	679800	455555	20 %	546 666	
		3.ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆ ԻԿՍ ՍՊԸ		680000	20 %	816000	520985	20 %	625 182	
		4.Աքսել ՍՊԸ		500000000	20 %	600000000	500000000	20 %	600000000	Մերժված
		5.ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ		550000000	20 %	660000000	550000000	20 %	660000000	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 25.03.2025թ.-ին և Համակարգի կողմից

- 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **«ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ**-ն:
- 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **«ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ» ՍՊԸ**-ն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ.

7.1. Համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Ներկայացված հավելված 1-ում (այսուհետ՝ Դիմում-հայտարարություն) լրացված չէ իրական շահառուի անուն ազգանունը և անձնագրի տվյալները: Հավելված 1-ը չի համապատասխանում հրավերում առկա Հավելված 1-ի օրինակելի ձևին:
- 1-ին չափաբաժնով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ «Ֆիրմային անվանում» սյունակում անհրաժեշտ է գրել առաջարկվող ապրանքի Ֆիրմային անվանումը, «Ապրանքային նշան» սյունակում անհրաժեշտ է գրել առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, «Մակնիշը» սյունակում անհրաժեշտ է գրել առաջարկվող ապրանքի մակնիշը, «Արտադրողի անվանում» սյունակում անհրաժեշտ է գրել արտադրողի կազմակերպաիրավական անվանումը: «Տեխնիկական բնութագիր» սյունակում երաշխիքային ժամկետը հստակ գրել:
- Ներկայացված լիազորագրին կցված չեն լիազորված անձի և լիազորողի անձը հաստատող փաստաթղթերի (նույնականացման քարտ, անձնագիր) պատճենները:

7.2. Համակարգի կողմից 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ» ՍՊԸ**-ն -ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Ներկայացված հավելված 1-ում (այսուհետ՝ Դիմում-հայտարարություն) լրացված չէ իրական շահառուի անուն ազգանունը և անձնագրի տվյալները: Հավելված 1-ը չի համապատասխանում հրավերում առկա Հավելված 1-ի օրինակելի ձևին:
- 2-րդ չափաբաժնով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ «Ֆիրմային անվանում» սյունակում անհրաժեշտ է գրել առաջարկվող ապրանքի Ֆիրմային անվանումը, «Ապրանքային նշան» սյունակում անհրաժեշտ է գրել առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, «Մակնիշը» սյունակում անհրաժեշտ է գրել առաջարկվող ապրանքի մակնիշը, «Արտադրողի անվանում» սյունակում անհրաժեշտ է գրել արտադրողի կազմակերպաիրավական անվանումը: «Տեխնիկական բնութագիր» սյունակում երաշխիքային ժամկետը հստակ գրված չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ-25/1** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 27.03.2025թ.-ին Համակարգի միջոցով ծանուցել **«ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ**-ին և **«ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. 08.04.2025թ. ժամը 10:30-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 08.04.2025թ. ժամը 10:30-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ **մասնակիցները** սահմանված ժամկետում ներկայացրել են շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. **«ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ**-ի և **«ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ» ՍՊԸ-ի** հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

08.04.2025թ. գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից:
- 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ» ՍՊԸ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Կարեն Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Գևորգ Սեփոյան

_____ Սիլվա Գարանյան

քարտուղար՝ _____ Տաթևիկ Կիրակոսյան